զեղրայր Ապուզոշ Իսրահիմի՝ կապանօք տարաւ ընդ իւր 'ի Դամասկոս, և պահանջէր 'ի նմանէ հարիւրաւոր քսակս և ապա թողուլ։ Եւ եղեւ յիշանել 280 ուխտաւորացն Հայոց յԵրուսաղէմէ 'ի Ռեմլէ, ընդ առաջ ելեալ Ապուզոշն՝ կալաւ 'ի նոցանէ 29 երեւելի անձինս և եդ 'ի բանտի, և զայլս առաքեաց 'ի Ռեմլէ. ապա գրեաց առ Խորհրդականըս, թէ տուք բերել զեղրայրն իմ, եւ ես արձակեցից զուխտաւորսն։ Եթէ ձեռնամուխ լինէին, առաջի կայր նոցա զոնէ հատուցանել 50,000 դահեկանս, վասն որոյ թողին այնպէս. ուխտաւորք մնացին 'ի չարչարանս, և այլքն 'ի դաշտն Ռեմլէի անտանելի խղճութեամբ սպասէին։ Պօղոս Եպիսկոպոս 'ի դնալն յԵգիպտոս ականատես է այսմ թշուառութեան ուխտաւորաց, այլ ոչ ձեռնհաս։ Ապա յաւելին խնդրել 'ի Պատրիարքէն և յազգապետաց հասանել 'ի թիկունս օգնականութեան Ս. Աթոռոյն, բողոքել առ Տէրութիւնն, և յետս պահանջել զաւելի առեալ դրամն 'ի գործակատարէ Նորին, և զօրաւոր հրովարտակաւ չափ եւ կոպար դնել հարկաց Բդեշխին եւ Դատաւորին, և բառնալ զանկանոն պահանջս այլազգեաց, և հոգալ վասն թեթեւութեան պարտուց, եւ կամ խպառ բառնալ զտոկոսիս, որով լիցի հնար բանալ վերստին զդուռն վանաց և մնալ միաբանաց։ Զայս նամակ գրեցին 'ի Բերրոնէ առ Կարապետ Պատրիարք և առ Գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս, եւ ընդ նմին առաքեցին զցուցակ տրոց գրեալ յականէ յանուանէ, եւ խնդրեցին զպատասխանիս թղթոց առաքել յԵգիպտոս, և խորհէին յղել առ նոսա զմի ոմն յինքեանց պատմել զամենայն ինչ բերանով։ Ի հասանել այսոցիկ նամակաց, ետ թարգմանել Պատրիարքն զամենայն անկանոն գործս Բդեշխին եւ զտառապանս միաբանաց և ժողովրդոց, յետս պահանջելով զաւելորդ դրամն զոր էառ Կուսակալն, այլովքն հանդերձ, եւ մատոյց 'ի Դուռն։

Իսկ այլազգիք Երուսաղէմի դնացեալ զկնի եպիսկոպոսաց 'ի Բերրոն բռնադատէին զնոսա դառնալ անդրէն յԵրուսաղէմ, եւ 'ի չանալ նոցա, երդմամբ դաշինս հաստատէին՝ այնուհետեւ չնեղել զնոսա և չպահանջել ինչ։ և 'ի դէպ ժամանակի լինել օգնական, և այսպէս յորդո-